

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Մտարարութիւնը բաց է առաւօտուն 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն յիշուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՔՈՎՆԱԳՈՒԹԻՒՆ

Հոգեկան հիւանդների վիճակը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փոքրիկ նկատողութիւններ. Մամուլագրութիւն. Նամակ նոր-նախընթացի. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժողովուրդը եւ բժշկականութիւնը:

ՀՈԳԵԿԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր ակնառես ենք, թէ ինչպէս հոգեկան հիւանդներից շատերը մեռնում են անխնամ շնորհիւ այն հասնող զամանակի, որ գոյութիւն ունեցող հիւանդանոցները եւ ապաստարանները անկարող են անդադրել բոլորից:

Ինչ անել այդպիսի հիւանդներին: Անկասկած պէտք է ամեն ջանք գործ դնել հիմնելու նոր հիւանդանոցներ որ այնքան բազմապիսեւ նրանց թիւը, մինչև որ բոլոր հիւանդները տեղ գտնեն իրանց համար հիւանդանոցներում:

Ցանկանալով օգնել խնամատարութեան գործին, եղան առաջարկողներ մամուլի մէջ, որ հիւանդանոցներում գտնվող հիւանդների մի մասը տեղափոխվի գիւղերը եւ յանձնվի գիւղացիների խնամքին: Այդպիսով նրանք յոյս ունեն տեղ բանալ հիւանդանոցներում այնպիսի հիւանդների համար, որոնք կարօտ են առանձին մըշտական հսկողութեան եւ պէտք է անպատճառ հիւանդանոցներում գտնվեն:

Գիւղական ընտանիքներում հոգեկան հիւանդ պահելը փորձված է մի քանի անգամ եւ երբեմն ունեցել է աջող հետևանքներ. սակայն ընդհանրապէս նա չէ կարող համարվել խելացի եւ նպատակաւոր միջոց եւ նա պէտք է դէն ձգվի խնամելու եղանակների շարքից:

Ճիշդ է, շատ հիւանդների վրա բարեւոր կերպով է ազդում գիւղը իր հասարակ եւ պարզ կեանքով, առողջարար եւ թարմացնող օդով, բնութեան տեսարաններով, ծառ ու կանաչով, բայց պէտք է այն էլ աչքի առաջ ունենալ, որ գիւղացիները ամենեւին պատրաստված չեն հոգեկան հիւանդները պահելու համար, իսկ գիւղական ամբարձր յաճախ սիրում է խա-

ղեր խաղալ այդպիսի հիւանդների գլխին եւ նրանց ենթարկել ծաղրի եւ վիրաւորանքի:

Եթէ գիւղը իր բարեմասնութիւններով ընդունակ է գոհացուցիչ կերպով ազդելու հոգեկան հիւանդների մի որոշ դասի վրա, անհրաժեշտ է հիւանդանոցներում ստեղծել գիւղական կեանքի պարագաներ, կամ եթէ կան յարմար շինութիւններ գիւղական շրջաններում, այնտեղ տեղափոխել հիւանդներին՝ յատուկ խնամատարների կամ գիւղական քոյրերի անմիջական հսկողութեան տակ, որպէս զի այդ հիւանդները չենթարկվին այնպիսի ազդեցութիւնների, որոնք աննպաստ կարող են լինել նրանց համար:

Ամեն տարի աւելանում է հոգեկան հիւանդների թիւը եւ հերթական կարելու հարց է դառնում նրանց խնամատարութեան հոգը: Հասարակութիւնը չէ կարող գերազգաց չը լինել դէպի իր խելոճ եւ հիւանդ անգամների վիճակը: Նա պարտաւոր է իր նուիրատուութիւններով նպաստել, որ գտնվեն հիւանդանոցներ պաշաճաւոր յարմարութիւններով: Եւ եթէ կարիքը ստիպել հիւանդների մի մասը կարհէ գիւղերում, անհրաժեշտ է, որ նրանց խնամատարութիւնը կատարվի խելացի հսկողութեան տակ պատրաստված ղեկավարների միջոցով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Իւրաքանչիւր աղջկատէր խելոճ թիֆլիսեցու երազած փեսացուն գաւառացին է, նա ամեն ջանք գործ է դնում գտնելու գաւառացի: Ինչչնև Որովհետև գիտեն որ գաւառացին դեռ մաքուր է եւ ամուսնական խնդիրներում գաւառացիները գաւառացին գէտ կնոջը չէ նկատում իրբեւ վաճառքի առարկայ, նա չէ նկատում ամուսնութիւնը իրբեւ մի միջոց հարստանալու Այդպէս է եղել ընդհանրապէս մինչև այժմ եւ շատ ցանկալի է, որ այդպէս էլ չարտնակվի: Ո՞րի աչքերից չէ հոսել արցունքները կաթիլներ տեսնելով Պէպօի քրոջ անբաղդանալը զբրթամա չունենալու պատճառով: Ի՞նչ է կարողացել սառնասիրտ կերպով տեսնել

կէկէլի սրտակոտուր մղկացող եւ ո՞ր անիրաւն է եղել, որ չէ անհեղ այդ զբրթամա կանօնը սանձանողին:

Հասարակութեան ընտիր մասը, իր համակրանքով դէպի «Պէպօ» պիէսան, արդարացի կերպով բողբոջել է այդ աւերիչ ոյժերից բարձր զբրթամա տալու սովորութեան դէմ, բայց դրան հակառակ իբրեւ դառն ծիծաղ՝ նկատելի է աւերիչ սովորութեան մուտքը եւ տարածվելը գաւառներում:

Վերցնենք, օրինակ, Ախալցխան. մինչև այժմ այնտեղ դեռ չէ եղել օրինակ, որ օրիորդի բաժինքի հետ նաեւ փող տային եւ եթէ առաջարկութիւններ եղել են տղաների կողմից, աղջկատէրերը մերժելով մերժել են, չը ցանկանալով օրինակ դառնալ եւ մտցնել այդ սովորութիւնը:

Վերջերս այնտեղ կատարվել են մի քանի դէպքեր, երբ արդէն նշանադրված երիտասարդներ նշանվելուց յետոյ պահանջել են, իբրեւ օժիտ, որոշ գումարներ, սպանալով հակառակ դէպքում ամուսնութիւնից հրաժարվել եւ իսկապէս հրաժարվել են: Նոյն իսկ մի ամուսնացած եւ մի քանի ամիս կնոջը հետ միասին ապրած երիտասարդ ուղարկում է կնոջը հօրից որոշ գումար բերելու, իբրեւ օժիտ, հակառակ դէպքում բաժանվելու սպանալիք է կարգում, որ եւ իսկապէս կատարվել է:

Չէինք ուշադրութիւն դարձնի այս երեւոյթի վրա, եթէ դա լինէր բացարձակ դէպք, բայց օրինակը այնքան վարակիչ է եղել, որ արդէն արձագանք է գտել նշանված երիտասարդների մէջ: Սովորութիւնը ընդհանրանում է: Օրինակելի է՝ աղջկատէրերի բռնած դիրքը, նրանք ոչ թէ համաձայնվել են կատարելու փեսացուների տղեղ եւ անբարոյական պահանջները, այլ կտրական կերպով մերժել են իրանց աղջկաներին տալ այդպիսի մարդկանց: Դա շատ խրատական կը լինի երիտասարդների համար, իսկ առաւել լաւ կը լինի, եթէ այդպիսի անամօթ փեսացուներից երես դարձնէր նաեւ հասարակութիւնը:

Մի բան ունէք գնահատելի, գաւառացի երիտասարդներ. դա ձեր անշահատէր վերաբերմունքն է դէպի ընտանիքը եւ ամուսնութիւնը, պահեցէք այդ հայկական գեղեցիկ ամուսնութիւնը, ապա թէ ոչ զբրթամա՞ նորամուտը սովորութիւնը բարուքանդ կեանքի են արժանաւորութեան հետ, հարկաւոր է մեծ համբերութիւն ու եւս առաւել մեծ ներողամտութիւն դէպի ժողովուրդը, որի պակասութիւնները հետեւանք են դարաւոր տղիտութեան Պատահել ու պատահում են բժիշկներ, որոնք հրաժարվում են գիւղացու հետ գործունենալուց ու նոյն իսկ կոպտութեամբ մերժում են նրա թախանձագին խնդրքը՝ ճար անկտառապող հիւանդին, ասելով, որ գիւղացին իր տղիտութեամբ ու գոնհիկ անտարբերութեամբ դէպի բժիշկ պատուէրները՝ մեծ մասամբ անբարաւոր հետեւանքներ է հասցնում բժիշկութիւնը ու այդպիսով գցում բժիշկ վարկը, օրին անաղողութեան դէպքում հայտնում են անխնայ թէև այդ այդպէս է, բայց բժիշկը պէտք է հպատակվի իր կոչման, բարոյապէս բարձր գտնվի գոնհիկ մարդուց, նրա հետ գործ ունենալու օգնութեան ձեռք մեկնէ բոլոր իրան գիմողներին. ուստի իբրոյնչեալ բժիշկներին գովել ու համակրել ոչ մի դէպքում չէ կարելի:

Թէ մանաւանդ խելոճերի համար, որոնցից եւ իսկապէս կազմված է գաւառի քանկիւնների մեծամասնութիւնը:

Անյուշ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Wilhelm von Massow: „Aus Krim und Kaukasus“ Reiseskizzen. Leipzig, 1902.

Վիլհելմ Ֆոն Մասով. Երկրից և Կովկասից ճանապարհորդական պատկերներ, Լայպցիգ, 1902.

Մեր արդէն մի քանի անգամ առիթ ենք ունեցել մամուլի միջոցով մասնացոյց անել գերմանացի այն մի շարք անբարեխելոճ ճանապարհորդների վրա, որոնք սկզբունքով կամ ազդեցութեամբ հայակերներ լինելով եւ մեր երկրում երբեմն ճանապարհորդելով, գերմանական գրականութեան միջոցով հայերի մասին վերին աստիճանի բացասական գաղափար են տարածում եւ բաւական խոշոր ազդեցութիւն գործում գերմանական հասարակական կարծիքի վրա: Օրինակ, երեւակայեցէք, գերմանացի ճանապարհորդը գնում է Կ. Պոլիս եւ այնտեղ պատահմամբ ծանօթանում ու գործ է ունենում մի որ եւ է հայ սեղանաւորի հետ. վաղը տարել է հայ ազգին, եթէ վերոյիշեալ սեղանաւորը վատ եւ բացասական յատկութիւններով օժտված մի սովորական մահկանացու եղաւ. այն ժամանակ գերմանացի ճարապարհորդը թափում է նրա գլխին իր սովորական հայհոյանքերը ու անկանխելու կամ, ենթադրենք, գերմանացու մեր երկրում ճանապարհորդելու ժամանակ ուղեկցել եւ ճանապարհները ցոյց է տուել մի որ եւ է հայ ուղեցոյց (որոնց մեծ մասը սովորաբար բախտախնդիր մարդիկ են լինում) այն ժամանակ հայ ուղեցոյցից ստացած վատ տպաւորութիւնները գերմանացի ճանապարհորդը բոլոր հայերի անցեալից ժամանակ սեփականութիւն է համարում:

Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ գերմանական լեզուով հայերի մասին լոյս տեսած աշխատութիւնների մեծագոյն մասը մեր ազգի մասին աննպաստ եւ թիւր կարծիքների մի կատարեալ ժողովածու է ներկայացնում, որտեղ ամեն տեսակ հայոյանքներ կարելի է գտնել: Ծանօթ չը լինել հայերի իսկական կեանքի հետ, ի նկատի չառնել նրանց պատմական անցեալը, տեղն ու տեղը խոր կերպով չունենալ ստիպել նրանց ազգայնական ընտրոշ եւ տիպիքական յատկութիւններն ու հոգեբանութիւնը, այլ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԺՈՂՈՎՈՐԻՒՆ ԵՒ ԻԺԵԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Նամակ Գանձակի գաւառից)

Վերջին տարիներս մի միտքարական երեւոյթ է նկատուում մեր գիւղերում, գիւղացիների մէջ բուն է դնում հաւատ դէպի բժշկականութիւնն ու բժիշկները ու քիչ-քիչ աւելանում է հաստատողների թիւը, որը ոակայն շատ անշահ փոքրամասնութիւն է կազմում դեռ. մեծամասնութիւնը դեռ եւս գրաքցներին, փախկներին, դալլաքներին, տաւարած վիրաբույժներին ու այլ անբարոյ էսոկուպաններին անհամեմատ աւելի մեծ հաւատ է ընծայում եւ իսկական բժիշկներին ու նրանց հաստատողներին ծաղրում: Ասում ենք քիչ-քիչ է աւելանում հաստատողների թիւը, քանի որ գիւղացին առհասարակ ամեն նոր բան շատ դանդաղ է իրացնում, դէպի լաւ տանող ամեն բանում նա կամաց-կամաց է առաջադիմում. նա կասկածոտ է դէպի նորութիւնը ու յամառ այն բանում, որին ընտելացած է վաղուց:

Նորամուտութեան որ եւ է անաղողութիւնը, որը յաճախ հետեւանք է լինում գիւղացու անպատրաստականութեան ու անբնորոշականութեան օգուվելու ինչպէս հարկն է նոր բանից, սառց-

նում է գիւղացուն այնպիսի, որ նա, հրաժեշտ տալով նորամուտ ձեռնարկութեան կամ սովորութեան, մի անգամից մի քանի տասնեակ տարիներով յետ է գնում: Նոր ջանքեր, կեանքի նոր հարուածներ աւելի ուժգին ու ազդու են հարկաւոր, որ նա կրկին սկսէ առաջ շարժվել իր յետ գնացած ճանապարհով: Այդպիսով ամբողջ 50—60 տարի էր հարկաւոր, որ կարողանալիք կատարեալ ժողովրդականութիւն ստանալ մեր գաւառում, որ հայերի հարեւան գերմանացիները այդ բոլոր ցանկ սկսել են 30-ական թուականներից: Նոյն բանը կատարվեց նոր ձեւի գութանի հետ եւ նոյնը կատարվում է ամեն մի նորութեան հետ: Գանձակում ու գերմանացական Երեւանի գիւղում արդէն տասն տարուց աւել է, ինչ բժիշկում են խաղողի վաճառքը, մեր գիւղերում, ուր կայ այգեպանութիւն, հազիւ նոյն բանը մի յիսուն տարուց յետոյ տարածվել: մի գիւղում միայն մի երկու այգեպաններ սկսել են իրանց այգիները բժշկելը չը նայած մեծամասնութեան թերահաւատութեան ու նոյն իսկ ծաղրին:

Թժկականութեան ժողովրդականանալը անհամեմատ աւելի դանդաղ քաղիւրով է առաջ գնում, ու նրան, այդ ժողովրդականանալուն, աւելի վտանգներ ու անաղողութիւններ են սպանում. բաւական է բժշկման որ եւ է անաղող դէպք, կամ անբուժելի հիւանդից բժշկել հրաժարումը, նրա անկեղծ, ազնիւ խոստովանումը, որ այս ինչ հիւանդութիւնը անբուժելի է, որ բժշկականութիւնը անօգուտ բան հռչակ-

Աւելորդ չեն մի քանի փաստեր, որոնք շատ ընտրոշ են գիւղացի պահանջների համար: Ա. գիւղացի Ա.-ը հիւանդանալով իր ազգականներից մէկի խորհրդով, գնում է քաղաք ու դիմում բժշկին: Վերջինս տալիս է նրան մի սրտակ հեղուկ զեղ ու պատուիրում օրը երեք անգամ խմել՝ մի բաժակ ջրի մէջ կաթեցնելով տաս կաթիլ իւրաքանչիւր անգամ: Ա.-ը մի երկու օր կատարում է բժշկի պատուէրը ու տեսնելով, որ չէ լաւանում, կորցնում է համբերութիւնը ու միանգամից առանց ջրի խմում սրտակի ամբողջ հեղուկը: Երկու տարվա ծանր հիւանդութիւնից յետոյ նա մի կերպ առողջանում է: Երբ նրան հարցնում են, թէ ինչու զեղն ամբողջապէս խմեցիք միանգամից, նա պատասխանում է՝ Ե՛րէ ո՞նց անէի. կաթ-կաթ եթէ խմէի, մի ամբողջ տարի չէի վերջացնի. ասացի միանգամից կուլ տամ ու ձեռաց լաւ դառնամ. կուլ տուաւ, ամա մահվան դռնից հազիւ ազատվեցի. տասն օր էր եւ մէյրի պէս վէր էի ընկած. յոյստուրի տուրք քանդվի իր գլխին, քիչ էր մնում, թէ տունս քանդվի էր. ընէի աղու զանրիմար զեղը մարդիկ կը տան, որ նա ինձ տուել էր. էլի ողորմի Գիւլիւնց դար լաքի հօրը. նա ինձ թափեց:

Կ. գիւղացի Տ. Պ.-ը հիւանդանում է ու դիմում նախ Գանձակի ու յետոյ թիֆլիսի բժիշկներին: Վերադառնալով գիւղը, նա բերում է իր հետ մի քանի տեսակ զեղեր, փոշի ու հեղուկ: Առաջինի պէս ճանաչելով զեղերը բժիշկների ցնցումները համաձայն քիչ-քիչ գործ ա-

զանազան միտումներով կամ տգիտաբար նրանց մասին բացատրական կարծիք տարածել գրականութեան միջոցով, զա կրասիական այնպիսի անբարեխղճութիւն է կամ այնպիսի մեղաւորութիւն է գրական տարրական էտիկայի դէմ, որի նմանը հազու կարելի է երբ եւ իցէ երեւակայել: Վերոյիշեալ ճանապարհորդների հայերի մասին գրած աննախանձելի աշխատութիւնները ոչ միայն մոլորեցնում են գերմանական ոչ այնքան կրթված ժողովրդական մասան, այլ եւ շատ անգամ գերմանացի աւանանք գիտնականներին, որոնք հայերի հետ անձամբ ծանօթ չէ լինելով, կարելոք դէպքերում նրանց մասին տեղեկութիւններ հաւաքելու ժամանակ դիմում են այդ ճանապարհորդների գրուածքներին եւ գիտական խոշոր թիւրիմացութիւնների մէջ ընկնում:

Հէնց այդ է պատճառը, որ գերմանացի նոյն իսկ շատ հռչակաւոր գիտնականներից շատերը հայերի մասին ոչ ցանկալի են սխալ կարծիք ունեն, որ, շատերից միայն յիշեք յայտնի քաղաքատեսն Կ. Բիւլեթինը, ազգագրագէտ Ռատցելին, մարդաբան Ռանքէին եւ այլն:

Հէնց այսօր, տողերս գրելուց մի քիչ առաջ, գերմանական «Berliner Tageblatt» նշանաւոր օրաթերթում կարդացի ճանապարհորդական մի ակնարկ հայերի մասին, որ շատ ընդունակ օրինակ կարող է է դառնալ շատ անձանքս հաստատելու համար: Մի բարձրատեսի զինուորական եւ մի եւ նոյն ժամանակ գիտնական՝ կառավարութեան յանձնարարութեամբ ճանապարհորդում է Պարսկաստանում եւ իր ստացած տպաւորութիւնները այժմ հետզհետէ հրատարակում է Բերլինի վերոյիշեալ նշանաւոր օրաթերթում: Այդ գիտնորական գիտնականին ուղեկցում է մի ոմն Իւսուֆ (նոյն իսկ կառավարիչ է Իւսուֆի հայ լինելը, դուրսէ նա պարսիկ կամ ասորի է), որից մեր եւրոպացի ճանապարհորդը դժգոհ լինելով, դէպքից օգուտ է քաղում հայերին անհիմն կերպով հայտնելու եւ կրպարտելու:

Անա թէ նա ինչ է ասում, ի միջի այլոց, «Հէնց դրա համար էլ նա (Իւսուֆը) հայ է եւ ես չեմ կարծում, որ ամբողջ արեւելքում կարելի լինի մի այնպիսի կեղծ եւ բարոյապէս ապականված ժողովուրդ գտնել, որպիսին հայերն են, որոնք համար ունեն շատ անգամ փորձել են Եւրոպայից խաղաղաց արշաւանք կազմակերպելու Հայերից աւելի վատ ծառայող (ուղեղորոշներ) հազու կարելի է գտնել»: Անա ձեռ գիտական եւ գրական բարեխղճութիւն:

Բայց տողերս գրելու գլխաւոր առիթը եղաւ Լայպցիգում նորերս լոյս տեսած Վ. Փօն Մասսօլի «Կրիտիկ» եւ «Կովկասից» վերնագրով աշխատութիւնը, որ կազմում է վերոյիշեալ հեղինակի երկարամտալուստ աստուածաբանական արդիւնքը եւ նոյնպէս զերծ չէ մնացել գրական ու գիտական անբարեխղճութիւնից: Հեղինակը գերմանական բաւական աչքի ընկնող գրողներից մէկն է: Նա գիտնական նպատակով երկու անգամ ճանապարհորդել է Կրիտիկում եւ Կովկասում եւ ժամանակին իր ճանապարհորդական տպաւորութիւնները տր-

պագրել է Բերլինի «Tägliche Rundschau» յայտնի լրագրում, որոնց ժողովածուն կազմում է 12 դրուաններից բաղկացած եւ 39 գլխաւորութիւնով զարգարված վերոյիշեալ աշխատութիւնը: Վ. Փօն Մասսօլի աշխատութիւնը գերմանական մամուլի կողմից լաւ ընդունելութիւն գրտաւ, բայց, գործադրաբար, առանց մի որ եւ է ակնարկի այն մի քանի թերութիւնների եւ անհիմն կարծիքների մասին, որ նա յայտնում է իր աշխատութեան զանազան մասերում հայերի վերաբերմամբ:

Հեղինակը Օրենսալից մտել է Կրիտ թերակղզին եւ այնտեղից էլ Կովկաս, որտեղ երկար ժամանակ մնալով՝ յարմարութիւն է ունեցել ուսումնասիրելու այդ երկրի աշխարհագրական դիրքը, նրանց բազմաաբար, բազմազեղ եւ բազմազեղ ազգաբնակչութիւնը, վերջինիս անցեալ եւ ներկայ դրութիւնը, սովորութիւնները, պարագայութիւնները, կենսը, հոգեբանութիւնը եւ այլն: Նրա աշխատութիւնը աւելի հետաքրքիր են դարձնում այն մի շարք պատմական-ազգաբնակչական եւ լեզուագիտական տեղեկութիւնները, որ Փօն Մասսօլը տալիս է Տարիկեան թերակղզու եւ Կովկասի ազգերի մասին:

Իր աշխատութեան ամենաանտաքըքիր եւ մեծ մասը նա նուիրել է Թիֆլիսին, որի լատն ազգաբնակչութիւնը, գլխաւորապէս հայերը, գրաւել են նրա ուշադրութիւնը: Հայերի, վրացիների եւ ուսնների մասին աշխարհագրական, պատմական եւ ազգագրական բաւական տեղեկութիւններ տալուց յետոյ, հեղինակն իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է նրանց ներկայ դրութեան եւ միմեանց հետ ունեցած յարաբերութեան վրա: Բայց, գործադրաբար, պէտք է խոստովանել, որ Փօն Մասսօլը չէ կարողացել այդ յարաբերութիւնը բոլորովին ճիշդ բնութիւնը եւ յաճախ ընկել է այնպիսի թիրախացութիւնների եւ սխալների մէջ, որոնք յատուկ են մեր երկրը այցելած գերմանական ճանապարհորդների մեծամասնութեանն եւ որոնց մասին մենք չեյտեցինք վերելու: Օրինակ, խոսելով վրացիների մէջ վերջին տարիներս նկատվող կուլտուրական այն հոսանքի եւ ձգտման մասին, որի նպատակն է վրացիների կրթական մտաւոր մակերեւոյթը բարձրացնել, կրթութիւնը ժողովրդական մասսայի սեփականութիւն դառննել եւ զօրեղ մրցումն առջնացնել հայերի եւ ուսների դէմ, հեղինակը չէ ինչ ասում, որ վրացիները կարող են տնտեսականապէս մրցել իրանց մրցակիցներին, գլխաւորապէս հայերի դէմ, որովհետեւ հայերի առեւտրական ճարտիկութիւնը եւ խորամանկութիւնը ամբողջ Կովկասում չափազանց յայտնի են եւ առակ են դարձել: Նրա կարծիքով վրացիների համար շատ նպաստաւոր է այն հանգամանակը, որ նրանց գլխաւոր թշնամիները հայերն իրանց ազգայնական ճշտումների համար թէ ուսներից եւ թէ Անգրկովկասի միւս ազգերից չափազանց ատված եւ արհամարհված են:

Վ. Փօն Մասսօլը էլ չէ կարողանում իսկապէս դատել, թէ որքան հիմք ունի իր ենթադրած վերոյիշեալ ատելութիւնը եւ իրաւացի

կերպով կարծում է, որ այդ երեւոյթը (եթէ այդ, ի հարկէ, գոյութիւն ունի) միայն կարելի է նրանց անտեսական պայմանների մասնաւոր ուսումնասիրութեամբ որոշել, որ իրանց, գործադրաբար, չէ աշողվել: Գերմանացի հեղինակը չէ հաւատում եւ այն բանին, երբ հայերն ու նրանց բարեկամները հաստատում են, որ իրանց հայրենիքում օտար տիրապետութեան իսկական ճնշման ազդեցութեան չնորհիւ՝ հայերը հոգադործութիւնից եւ ազնիւ աշխատանքից օտարացել, բարոյապէս ապականվել (միթէ) եւ իրանց առեւտրական ներկայ վատանա՝ աւ ոգին են ստացել, որովհետեւ այդ բանը, իր կարծիքով, քննահանուր հոգեբանական հիմքերին հակառու է: Նա պնդում է, որ գիւղական մի արդէն կազմակերպված ժողովուրդ, եթէ նա նոյն իսկ գոյութեան համար դառն կորի է մղում եւ իր մայրենի հողից կտրվում, բոլորովին չէ կարող առեւտրական այն նուրբ, կծծի եւ կեղտոտ ոգին ունենալ, որպիսին այժմ հայերն ունեն, եթէ դա նրանց բնատրութեան ընդունած անանձնայատկութիւնից չէ բխում:

Վ. Փօն Մասսօլը չէ մոռանում եւ մասնացոյց անել այն հանգամանքի վրա, որ հայերը աչքի ընկնող ընդունակութեան տէր ժողովուրդ են եւ հէնց այդ հանգամանքին է վերադրում այն բարեկամութիւնը, որ տածում են գերմանական աստուածաբանները դէպի հայերը: Հեղինակը մի բան եւս գրական կերպով հաստատում է, որ այն հայերը, որոնք մի որ եւ է ազգաբնակչութեան գլխաւոր տարրն են կազմում եւ միայն խնրված ապրում են, աշխատասէր հողագործներ են եւ շատ անգամ աչքի ընկնող գիտնականներ են առաջ բերում: Բայց ընդհանրապէս, նրա կարծիքով, հայերը ամբողջ արեւելքում յայտնի են իբրեւ արիւն ձեռողներ եւ իրանց միջոցներէ մէջ ոչ մի խտրութիւն չը դնող հացկատակ ժողովուրդ: Վ. Փօն Մասսօլը իր ճանապարհորդական աշխատութեան զանազան գլուխներում հայերի գլխին այդպիսի, մեծ մասամբ անհիմն եւ անտեղի, հայտնաբերներ թափելուց յետոյ, կարծում յետոյ փոշմանում է, որ ինքը շատ բան նրանց մասին առանց ապացուցանելու է ասում: Նա վերջապէս խոստովանում է, որ առնաստիակ դժուար է հայերի մասին մի ընդհանուր գատողութիւն ձեւակերպել եւ իր ասածները մեղմացնում է նրանով, որ գոնէ բոլոր այն հայերը, որոնք հետ ինքը ծանօթացել կամ գործ է ունեցել, ամենաանհամակերպի արարածներ են եղել:

Նրա ընդհանրապէս լուրջ եւ հետաքրքիր աշխատութիւնը ընթերցողի աչքում կորցնում է իր նշանակութիւնը այն ժամանակ, երբ նկատում էք նրա կիրքն ու նախապաշարմունքը հայերի վերաբերմամբ, որ, կարծես, նա իւրացրել է դեռ Կովկաս չը հասած Թիֆլիսում աւանաշարի օրերը պատելիս, նրան անհասկացողութիւն է այն բանը, երբ նա խանութներից ցուցանակների վրա մեծ մտածութեամբ հայկական անուններ եւ ազգանուններ է կարդում, երբ նկատում է, որ հայերը առեւտրական ասպարհում ընդհանրապէս գերադասեն վրացի-

ներկց, պարսիկներից եւ ուսներից: Նա կարողանում հաշտ աչքով նայել, երբ տեսնում է, որ հայերը բազմակողմանի առեւտուր ունենալով վրացիները գլխաւորապէս զէնք, որ դարանքներ եւ մրգեր են ծախում, իսկ պարսիկները՝ գորգեր եւ բուսեղէններ:

Լ ա Վ Կ Ի Գ

Ն ո Ր ս տ ա ց վ ա ծ գ ր ք Ե ր . 1) «Միջինասիական Յօրէկան» Յիշատակարան, Վնեստիկ 1901, Կ. 2) Ա. Կո—«Ստեփանոս Նազարեանց» 1 հատոր, Երևան, 1902, Կ. 8+228. 3) Բ. Կ. Ա. Կո—«Վերնապարտութիւն Ե Վերոյիշեալ» Երևան, 1902, Կ. 54, Գիրք 15 Կոպ. 4) Յովհ. Արքայեան—«Մայրենի Վեդոս», առաջին տարի, Երևան, 1902, Կ. 25 Կոպ. 5) Բազարտ Բալայեանց—«Մի կողմ հայ նախարարութեան ծաղան մասին», Պարիզ, Կ. 11, 6) Ա. Ի. Միտեկովսկի—«Городовое Положение 11 Июня 1892 года. Тифлиси, 1902, 118 Կ. 90 Կոպ.

ՆԱՄՍԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՑ

Նոր-Նախիջեանի կանանց խնամատար կերութեան նկատմամբ ոչ միայն մի քանի լատնական տեղեկութիւններ կարդալով այլ եւ տեղից ծանօթ լինելով նրա շուրջ 20 տարի տարած դերին, որով ցարկ հազարաւոր աղիքիներ կրթելով եւ զատարակելով՝ որ դեռ չէ ազգին զարգացած մայրեր, այժմ համակերպի ընկերութեան կազմաւորման մասնաւոր նրա գոյնն ու նիւթական կազմութիւնն եկեղեցուն յատկացնելու համար ձեռներէց եղողների ընթացքի մասին չեմ կարելի է ոչ ցաւ՝ գոնէ զարմանալ չը յայտնել:

Նախիջեանցու ընդհանրապէս եւ նրա իրական սեռի մասնաւորապէս գուրգուրանքով փայտալի ընկերութիւնը դառարեցաւ գործիւն ունենալուց, եւ նրա սեփական գործառնալի տիրացաւ եկեղեցին: Այսպէս էր ընկերութեան վերջին ժողովի յայտնած որոշումը:

1880 թուականից ի վեր նիւթականից գուրգուրանքը աղիքիներ տեղաւորութեան խնամարաններից փրկող մի համակերպի ընկերութիւն կազմաւորվեցաւ, կամ որոշ բան կործանվեցաւ, որի համար մեր ցաւն վիշտը իսպառ անմոռանալի կը լինէին, եւ Վ. Փ. Չալխուչեան իր յայտնի մարդասիրութեամբ չը փութար անմիջապէս մի նոր ընկերութեան օրինական իրաւունքը ձեռք բերելու: Նա իր անհամար խնամքով ընկերութեան, որին յօժարակամ միացան բոլոր մաթիւ անձանքները, թիւներ երկու սեռից, այս կերպով լուծված ընկերութեան կատարելագործականութիւնը ստանձնող մի այլ ընկերութիւն լոյս եկաւ: Մենք խորին շնորհակալութիւն յայտնելով Վ. Չալխուչեանին եւ նրա համախոհներին՝ ցանկանում ենք ամեն աշողութիւն նոր ընկերութեան Ստալյան մի իրաւաստական խնդր՝ վերաբերմամբ հին ընկերութեան՝ մեզ իսպառ անմոռանալի է մնում:

ձեռուց ու ցանկանալով «ձեռնաց» առողջանալ, մի զեղեցիկ օր վերցնում է բոլոր փոշի ու հեղուկ զեղերը իրար հետ խառնում ու «մախտելի» պէս ուտում այդ խառնուրդը: «Վայ սիրտս» քրտից, սիրտս էրվեց» ձայն է տալիս: Տ.՝ ք. ու ջրի «չօչան» գլխին քաշում, խմում ամբողջ ջուրը ու պտուկում: Մի քանի օր դիակի պէս պտուկելուց յետոյ Տ.՝ բանում է աչքերը ու սկսում կամաց-կամաց կենդանանալ, կազդուրվել, չը մոռանալով բժիշկների շնորհ-կենդանը քաշելը, որ նրա գլխին այնպիսի «օյն» դրին: Զօրեղ կազմուածքի ու կոկորդիլոպի ստամոքսի շնորհիւ՝ Տ.՝ ք. առողջանում է մի քանի ամիսից յետոյ: Երբ նրան հարցնում են, թէ ինչու նա այնպիսի վատագուր միջոցի դիակից, նա պատասխանում է՝ «Գանջուց ու Թիֆլիսից մի բեռը զեղեր էի բերել, եթէ քիչ-քիչ գործածէի, հիւանդութիւնս կրկու-երեք տարի կը քաշէր, զեղերը հազու կը վերջացնէի: շատ որ զաչկէս դեպք, առաջին ինչ ըլլում է, ըլի, թող զեղերն իրար հետ խառնեմ ու մի հետ ուտեմ. ես բախտ, ես կը մեռնեմ, ես կապրեմ, ուղաւորն չը մեռայ, լաւ դատայ. թէեւ փոքր մի շորս-հիւսք օր զուտնա սածեց, ամա յետոյ իմանքս դրսուկեցին. իմ կենսընում ես էրհէնց խելոք բան չէի արած: Դոխտուրները շատ զեղեր են տալիս, որ զատի հիւանդութիւնը ձգձգեն ու էրհէնց շատ փող պոկեն հիւանդներէ: Նրանց մէջ էրհէնց թաքուն պայման կայ. ես էր գիտէի ու նրանց աչքը հանցի, զեղերը խառնեցի, կերպ ու մի-երկու ամսում լաւ դա-

նայ. էլ կարացին ոչ ինձանից զատ պոկեն էն ա դոխտուրները որ մի քանի զեղեր տան, պէտք ա խառնես ու ուտես. ես դէս կը կտրի, ես դէն ..

Բ. գիւղում, ուր երկարամեայ պրօպագանդայի չնորհիւ հաստատ մտադրութիւն կար դեղատուն բանալ ու մշտական եթէ ոչ բժիշկ՝ գոնէ Ֆելքշեր պահել, նորերս պատահեց մի դէպք, որը այդ գործին մեծ հարուած հասցրեց: Պ. Ա.՝, մի քանի շաբաթ ան ընդհանուր հունձ անելով ու գիշեր-ցերեկ մնալով դաշտում, լսում է, որ նրանց այդու կենսաթ ծառերը լաւ հասել են. հնձածն ու հնձեղուն թողնում է ու մինչեւ այգին մէկ վազում. բարձրանում է կենսաթ ծառը ու մի-երկու ժամկէտ ընթացում նրա վրա նախկին ճոխութեան տխուր հետքեր թողնում միայն, պոկելով ողջ ծառը: Ծառից իջնելով նրա տակի արկից կուր ջուր է խմում ու ճանապարհովում ունուր Տանը ձեռաց օտի վրա մի երկու երեք լոշտի (թոնրից նոր հանած հաց) է ուտում ու մի թիթեւ կաթնայ կօնջօլ (իւղում եփած հին հացի կտորանքներ) մաքրագործում: Յետոյ նա ճանապարհովում է սարը տաւարին ակը տալու համար. սարի ճանապարհին անընդհանուր ջուր է խմում այս ու այն աղբիւրից. տեղ համեմելով՝ նախ քան տաւարին ակը տալը, փորձում է սարի կարագը, սերը, մածոնն ու եղաշորը՝ իւրաքանչիւրից մի անգին աման դատարկելով՝ մի-երկու եօխանների (սալի վրա թխած հաց) ուղեկցութեամբ: Նոյն

օրը երկույնան վերադառնալով տուն, նա շատ թեթեւ ընթրում է—երկու աման լոշի ու կօնջօլի կաթնայովը մէկ հաճած (թանապուր) նրանց գլխին ածում ու հանգստութիւն տալու համար ամենի ստամոքսին՝ բացօթեայ պատկում դրսում, չը մոռանալով կէս վերջին շոց չօչան՝ ստոր ջրով լիքը՝ մօտը դնել, երբեմն-երբեմն գլխին քաշելու համար: Առաւօտեան Պ.՝ մնում է տեղը պտուկած. անցիք հրում են, որ վեր կենայ ու մի օր բարեհիւսդանի տալուց յետոյ գնայ կրկին հունձ, բայց Պ.՝ վերանկր տակ մնչում է ու անաղաբ «վայ մեռայ» կրկնում:

Բանից դուրս է գալիս, որ նրա փորը կապվել է սաստիկ: Պ.՝ մերձմահ դրութեան մէջ է ընկնում: Եւրոպայ երկու օր չարալուում է նա: Գիւղում գանվող քաղաքայիններ խորհուրդ են տալիս նրա ծնողներին տանել նրան Գանձակ բժիշկներին մօտ: Ծնողները լսում են բարի խորհուրդն ու ամենուհի Գանձակում մի քանի բժիշկներ առանձին ու միասին քննում են հիւանդին ու խորհուրդակցութիւնից յետոյ յայտնում նրա ծնողին, որ հիւանդը փրկվել կարող է անդամահատութեամբ, իսկ զեղերը կարող են փրկել կարող են եւ չը փրկել: Եւր օպերացիոն բառը բացատրում են գիւղացուն, նա սարսափահար է լինում, կարծելով թէ իր որդուն ուղղակի մորթելու են, բաւականանում է տուած զեղերով ու խորհուրդներով եւ հիւանդին կրկին բերում է գիւղը: Գիւղում մի կին, ազգով յոյն, հայախօս, յայտնում է, որ

